

«Բարսիս»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Երևան – 2026

«Բարսիս»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարսիս»

**սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
ղեկավարությանը և մասնակիցներին**

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (Մայր ընկերություն) և նրա դուստր ընկերության (այսուհետ միասին՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքը և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025 թվականի հունիսի 19-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել խումբը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է

«Ալֆա Աուդիտ» ՍՊԸ

Լավրենտի Պողոսյան

Տնօրեն /առաջադրանքի պատասխանատու



«23» հունիսի 2026թ.

Երևան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

«Բարսիս» ՍՊԸ

առ 31-ը դեկտեմբերի 2025թ դրությամբ

ԱՎՏԻՎՆԵՐ	ԾԼԹ.	31.12.2025	31.12.2024
		հազ. դրամ	հազ. դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	2,039,958	1,662,146
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	7.1	1,950,230	852,501
Ոչ նյութական ակտիվներ		17,522	12,379
Գույքի	8	183,231	-
Հետաձգված հարկային ակտիվներ	22	76,951	57,938
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		4,267,892	2,584,964
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	5,832,467	5,662,332
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	2,375,622	2,006,637
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	3,259,091	3,894,031
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		11,467,180	11,563,000
Ընդամենը ակտիվներ		15,735,072	14,147,964
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Մեփական կապիտալ	12		
Կանոնադրական կապիտալ		3,600,000	3,600,000
Զբաղիված շահույթ		1,686,062	1,803,406
Ընդամենը սեփական կապիտալ		5,286,062	5,403,406
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	17,651	42,824
Վարձակալության գծով պարտավորություններ	7.2	1,503,963	663,515
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		1,521,614	706,339
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	13	32,532	99,378
Վարձակալության գծով պարտավորություններ	7.2	631,946	276,504
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	8,185,396	7,564,763
Շահութահարկի գծով պարտավորություն		77,522	97,574
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		8,927,396	8,038,219
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		15,735,072	14,147,964

10-ից 36-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. հունիսի 23-ին:

Հակոբ Մենեմյան

Տնօրեն

Ռոբերտ Սարգսյան

Գլխավոր հաշվապահ



Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

«Բարսիս» ՍՊԸ

2025թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ծնթ	2025 հազ. դրամ	2024 հազ. դրամ
Հասույթ	15	24,487,279	22,968,274
Վաճառքի ինքնարժեք	16	(14,691,258)	(13,499,569)
Համախառն շահույթ		9,796,021	9,468,705
Այլ եկամուտներ	17	78,708	128,162
Իրացման ծախսեր	18	(5,938,090)	(5,746,131)
Վարչական ծախսեր	19	(1,125,527)	(1,020,871)
Այլ ծախսեր	20	(210,145)	(193,812)
Գործառնական շահույթ (վնաս)		2,600,967	2,636,053
Ֆինանսական ծախսեր	21	(240,661)	(89,120)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ/վնաս		6,419	(55,215)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		2,366,725	2,491,718
Շահութահարկի գծով ծախս	22	(416,603)	(451,989)
Տարվա շահույթ (վնաս) հարկումից հետո		1,950,122	2,039,729
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		1,950,122	2,039,729

10-ից 36-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

«Բարսիս» ՍՊԸ

2025թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	հազ. դրամ Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	3,600,000	1,862,052	5,462,052
Տարվա շահույթ	-	2,039,729	2,039,729
Շահաբաժիններ	-	(2,098,375)	(2,098,375)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	3,600,000	1,803,406	5,403,406
Տարվա շահույթ	-	1,950,122	1,950,122
Շահաբաժիններ	-	(2,067,466)	(2,067,466)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2025թ.	3,600,000	1,686,062	5,286,062

10-ից 36-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

«Բարսիս» ՍՊԸ

2025թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար դրամ

	01.01.2025- 31.12.2025	01.01.2024- 31.12.2024
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	29,434,952	28,157,286
Վճարումներ մատակարարներին	(17,465,908)	(16,206,410)
Վճարումներ աշխատակիցներին	(3,574,301)	(3,271,103)
Վճարումներ բյուջե և սոց հիմնադրամ	(6,739,511)	(6,230,546)
Շահութահարկ	(533,190)	(478,204)
Այլ մուտքեր, այդ թվում՝	11,034	41,574
Այլ ելքեր, այդ թվում՝	(398,327)	(270,320)
Զուտ դրամական միջոցներ գործառնական գործունեությունից	1,267,939	2,220,481
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վաճառք	18,795	6,230
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերում	(196,863)	(572,473)
Ստացված տոկոսներ	60,350	57,824
Զուտ դրամական միջոցներ ներդրումային գործունեությունից	(117,718)	(508,419)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված վարկեր և փոխառություններ	6,397	43,273
Վարկեր և փոխառություններ մարում	(99,074)	(289,308)
Վճարված տոկոսներ	(2,667)	-
Շահաբաժնի վճարում	(1,696,580)	(1,432,660)
Զուտ դրամական միջոցներ ֆինանսական գործունեությունից	(1,791,924)	(1,678,695)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(641,703)	33,367
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	6,763	(28,051)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	3,894,031	3,888,715
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	3,259,091	3,894,031

10-ից 36-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը («Ընկերություն», դուստր ընկերության հետ միասին՝ «Խումբ») գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2002թ. փետրվարի 08-ին: Ընկերությունը հանդիսանում է «Սուրիկ-Հովիկ» ՍՊԸ իրավահաջորդը: Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեությունն իրականացնում է ՀՀ սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

Ընկերությունը զբաղվում է շինարարական ապրանքների, օժանդակի և կոսմետիկ միջոցների, տնտեսական ապրանքների ներմուծմամբ, ինչպես նաև մանրածախ և մեծածախ վաճառքով:

Ընկերությունը ներկայացնում է «ՆՈՐ ՏՈՒՆ», «KALDO» և «MARY» ապրանքանիշները Հայաստանում:

Ընկերության գրանցված գրասենյակի հասցեն է՝ ք. Երևան, Արշակունյաց պողոտա 57/16:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Իզումեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Դուստր Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերությունում Ընկերության մասնաբաժինը 100% է: Դուստր ընկերության գործունեությունը տարածքների վարձակալությամբ տրամադրումն է: Դուստր ընկերությունը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի կողմից 2022թ. մայիսի 27-ին: Դուստր ընկերությունը հանդիսանում է «Օկտանտ» ԲԲԸ-ի իրավահաջորդը:

Դուստր ընկերությունը գտնվում է ք.Երևան, Արին Բերդի փ. 3 նրբ., 13 հասցեում:

Խմբի աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2025 թվականի ընթացքում կազմել է 710, իսկ 2024 թվականին՝ 669 անձ:

Մայր և դուստր ընկերությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության միանձյա գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը:

Մայր ընկերությունը չի հանդիսանում այլ ընկերության դուստր ընկերություն:

Գործարար միջավայր

Ներկայումս համաշխարհային տնտեսությունը գտնվում է բարձր աշխարհաքաղաքական լարվածության ազդեցության ներքո: Իրանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև ռազմական գործողությունները հանգեցրել են գլոբալ շուկաների անկայունության աճին: Իսկ ռուս-ուկրաինական պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

2025 թվականի ընթացքում ՀՀ-ում 12-ամսյա գնաճն աստիճանաբար արագացել է: Գնաճի նման վարքագծին հիմնականում նպաստել են համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումները, որոնք տարեվերջին որոշակիորեն մեղմվել են: Միևնույն ժամանակ, ներմուծվող ոչ պարենային ապրանքներից եկող գնանկումային ճնշումները տարվա ընթացքում աստիճանաբար չեզոքացել են՝ մայիսից մտնելով թույլ գնաճային տիրույթ: 2025 թվականին ՀՀ-ում տնտեսական ակտիվությունը որոշակիորեն ավելացել է՝ պայմանավորված գերազանցապես շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճով, ինչի պարագայում տարեկան

տնտեսական աճը կազմել է 7.2%, այդ թվում՝ պայմանավորված նաև որոշ ժամանակավոր, ոչ կառուցվածքային գործոնների վերականգնմամբ: Այսպիսով՝ գնաճային սպասումները շարունակել են կայուն նվազել: 2025 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է աստիճանաբար կարգավորել դրամավարկային պայմանները՝ նվազեցնելով քաղաքականության տոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 0.5 տոկոսային կետով:

Ղազախստանի Հանրապետության տնտեսությունը շարունակում է ցուցաբերել զարգացող շուկայի բնութագրեր: Այն շարունակում է մնալ հատկապես զգայուն երկրի արտահանման մեծ մասը կազմող նավթի, գազի և այլ հանքային ապրանքների գների տատանումների նկատմամբ: Բացի այդ, բարձր գնաճը, 2022թ. հունվարի ներքին անկարգությունները, տարածաշրջանային քաղաքական շարունակական լարվածությունը և փոխարժեքի անկայունությունը բացասաբար են ազդել և կարող են շարունակել բացասաբար ազդել Ղազախստանի տնտեսության վրա՝ նվազեցնելով իրացվելիությունը և սահմանափակելով միջազգային ֆինանսավորման հասանելիությունը: Ղազախստանի ֆինանսական շուկաները շարունակում են մնալ անկայուն, բնութագրվում են գների զգալի տատանումներով: Այս մակրոտնտեսական միջավայրը շարունակում է էական ազդեցություն ունենալ Դուստր ընկերության գործունեության և ֆինանսական դիրքի վրա:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի գործունեության վրա՝ Հայաստանի և Ղազախստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Խմբի ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

2. Պատրաստման հիմքերը

2.1. Համապատասխանություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ): Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

2.2. 2025թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ստորև նշված են այն փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2025թ.-ին.

- Փոխանակելիության բացակայություն ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ:

2.3. Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, վստիսություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում» ՀՀՄՄ 18,
- «Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում» (ՀՀՄՄ 9 և ՀՀՄՄ 7 փոփոխություններ)

2.4. Զափման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.5. Համախմբման հիմքեր

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են Ընկերության և իր դուստր ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Ընկերության և դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

2.6. Կլիմային առնչվող հարցեր

Խումբը և նրա հաճախորդները ապագայում կարող են բխվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները,

որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Խումբը գիտակցում է հետագա ջանքերի անհրաժեշտությունը՝ կլիմայական գործոնները Խմբի ռիսկերի կառավարման գնահատականներում և արձանագրություններում ամբողջությամբ ինտեգրելու գործում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

3.1. Արտաբժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Մայր և Դուստր ընկերությունների գործառնական արժույթը՝ հայկական դրամն է:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտաբժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտաբժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31.12.2025թ.	31.12.2024թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56
ՀՀ դրամ/1 եվրո	449.01	413.89
ՀՀ դրամ/1 ՌԴ ռուբլի	4.8711	3.71

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտաբժույթով գործարքներից, ինչպես նաև արտաբժույթով արտահայտված դրամային հոդվածների

վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2. Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում բեռնափոխադրման և առաքման ծառայություններից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալու առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

3.3. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

3.4. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ

պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Կապիտալացված ծախսեր	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Արտադրական և տնտեսական գույք	5 տարի
Համակարգչային տեխնիկա	1 տարի
Այլ	8 տարի:

3.5. Վարձակալված ակտիվներ

Խումբը՝ որպես վարձակալ

Խումբը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում պահեստի, գրասենյակային տարածքների, ինչպես նաև խանութ-սրահների համար: Խումբը չի կնքում վաճառքի և հետադարձ վարձակալության պայմանագրեր:

Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ Փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբն իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Խմբի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Խումբը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խումբը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվն արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային

արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում: Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

3.6. Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամտում կամ փոխարժեքային տարբերությունից օգուտում (վնասում), բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ չունի:

Խմբի ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 25-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրամադրած փոխառությունները և դրամական միջոցները և դրանց համարժեքները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են

հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող)։

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունն աննշան է, գեղջում չի կատարվում։

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՄ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»։ Պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՄ 15-ի համաձայն։

Պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա։

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»)։

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ։

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար։

Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով։ ՖՀՄՄ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է Ծանոթագրություն 25-ում։

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են բանկային վարկերը, առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները։

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, և որտեղ կիրառելի է, ճշգրտվում են գործարքի ծախսումների մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը ֆինանսական պարտավորությունը չի դասակարգել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող։ Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Տոկոսների հետ կապված բոլոր ծախսերը ներառված են ֆինանսական ծախսումների կամ ֆինանսական եկամուտների մեջ։

Ներկայացված ժամանակաշրջաններում Խումբն իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ չունի։

Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 24-ում։

3.7. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվողյուրահատուկ ռիսկերը:

3.8. Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Խումբն ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է

փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.10. Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժիններ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված փայերի նումինալ արժեքը:

Փոխարկման պահուստը ներառում է Խմբում ընդգրկված արտերկրյա կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներկայացման արժույթով վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները:

Զբաղիված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.11. Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարները,

(դ) ոչ դրամային հատուցումները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն

ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՄ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է ղեկավարության արած՝ վարձակալության ժամկետների գնահատման, ինչպես նաև լրացուցիչ փոխառության դրույքի վրա, որն օգտագործվել է վարձակալության վճարները գեղչելու համար: Վարձակալության ժամկետը գնահատելու ժամանակ ղեկավարությունը հաշվի է առնում այն բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք Խմբի համար վարձակալության երկարաձգման

հնարավորությունը կիրառելու համար տնտեսական խթան են հանդիսանում, ինչպիսիք են վարձակալված վայրում գտնվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը, վայրերի փոխարինման վիճակագրություն, ինչպես նաև վարձակալության պայմանագրերը լուծելու և կնքելու ծախսերը:

Այս գործոններում փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ գնահատված վարձակալության ժամկետների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների ներկայացված արժեքների վրա:

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հաշվարկելու համար Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն:

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Խմբի՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Խումբը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Խմբի պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Խմբի առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է ծանոթագրություն 25-ում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարելի հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը:

6. Հիմնական միջոցներ

	Հոդամասեր	Շենքեր, շինություններ	Մեքենա- սարքավորումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Արտ, տնտեսական գույք	Համակարգ- չային տեխնիկա	Կառուցման ընթացքում գտնվող	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք									
Առ 01.01.2024թ.	29,700	1,084,846	227,588	581,916	688,818	114,942	-	135,971	2,863,781
Ավելացում	-	23,334	9,835	184,290	74,626	8,873	248,996	22,358	572,312
Օտարում	-	-	-	(20,734)	(88)	(341)	-	-	(21,163)
Առ 31.12.2024թ.	29,700	1,108,180	237,423	745,472	763,356	123,474	248,996	158,329	3,414,930
Ավելացում	-	370,921	109,822	121,527	5,055	33,138	3,855	49,835	694,153
Վերադասակարգում	-	-	79,188	-	-	-	-	(79,188)	-
Օտարում	-	-	-	(41,776)	(15)	-	-	-	(41,791)
Առ 31.12. 2025թ.	29,700	1,479,101	426,433	825,223	768,396	156,612	252,851	128,976	4,067,292
Մաշվածություն									
Առ 01.01.2024թ.	-	(411,109)	(170,026)	(336,714)	(411,527)	(108,892)	-	(73,344)	(1,511,612)
Ավելացում	-	(76,956)	(10,838)	(73,105)	(69,459)	(11,074)	-	(14,673)	(256,105)
Օտարում	-	-	-	14,575	17	341	-	-	14,933
Առ 31.12.2024թ.	-	(488,065)	(180,864)	(395,244)	(480,969)	(119,625)	-	(88,017)	(1,752,784)
Ավելացում	-	(77,930)	(86,988)	(96,309)	(69,234)	(13,566)	-	(19,979)	(364,006)
Օտարում	-	-	-	30,890	-	-	-	58,566	89,456
Առ 31.12.2025թ.	-	(565,995)	(267,852)	(460,663)	(550,203)	(133,191)	-	(49,430)	(2,027,334)
Հաշվեկշռային արժեք									
Առ 31.12.2024թ.	29,700	620,115	56,559	350,228	282,387	3,849	248,996	70,312	1,662,146
Առ 31.12.2025թ.	29,700		158,581	364,560	218,193	23,421	252,851	79,546	2,039,958

Ընկերության տրանսպորտային միջոցներից 40,000 հազար դրամ սկզբնական արժեքով շարժական գույքը գրավադրված է ՀՀ բանկում՝ վարկի ապահովման համար(2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ տրանսպորտային միջոցներից 40,000 հազար դրամ սկզբնական արժեքով շարժական գույք):

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված և ամորտիզացված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 852,576 հազար դրամ (2024թ.՝ 538,878 հազար դրամ):

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է ստորև ներկայացված հոդվածներով՝

<i>Հազ. դրամ</i>	31.12.2025	31.12.2024
Վարչական ծախսեր	175,768	172,696
Իրացման ծախսեր	103,629	73,105
Ինքնարժեք	84,609	10,304
	364,006	256,105

7. Վարձակալություններ

7.1. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Սկզբնական արժեք	
Առ 01.01.2024թ.	1,346,104
Ավելացում	-
Օտարում/դուրս գրում	-
Առ 31.12.2024թ.	1,346,104
Ավելացում	1,737,795
Օտարում/դուրս գրում	-
Առ 31.12.2025թ.	3,083,899
Մաշվածություն	
Առ 01.01.2024թ.	(209,436)
Հաշվարկ	(284,167)
Օտարում/դուրս գրում	-
Առ 31.12.2024թ.	(493,603)
Հաշվարկ	(640,066)
Օտարում/դուրս գրում	-
Առ 31.12.2025թ.	(1,133,669)
Հաշվեկշռային արժեք	
Առ 31.12.2024թ.	852,501
Առ 31.12.2025թ.	1,950,230

7.2. Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություններում հետևյալ կերպ.

<i>Հազ. դրամ</i>	31.12.2025	31.12.2024
Ոչ ընթացիկ	631,946	276,504
Ընթացիկ	1,503,963	663,515
	2,135,909	940,019

Խումբը հիմնականում վարձակալում է խանութների և պահեստների տարածքներ: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Ընկերությունը դասակարգում է իր՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:

Ապագա նվազագույն վարձավճարները հաշվետու ամսաթվերի դրությամբ արտացոլված են ստորև.

	Նվազագույն վարձավճարներ	
	31.12.2025	31.12.2024
<i>Մեկ տարվա ընթացքում</i>		
Վարձավճարներ	862,301	372,390
Ֆինանսական ծախս	(230,355)	(95,886)
	631,946	276,504
<i>Երկրորդից հինգ տարիների ընթացքում</i>		
Վարձավճարներ	1,751,072	744,782
Ֆինանսական ծախս	(263,284)	(81,267)
	1,487,787	663,515
<i>Հինգ տարվանից հետո</i>		
Վարձավճարներ	29,886	-
Ֆինանսական ծախս	(13,710)	-
	16,176	-
Զուտ ներկա արժեք	2,135,909	940,019

Խումբը թվով 37 վարձակալած տարածքների մասով ճանաչել է վարձակալության գծով պարտավորություն, որոնց մնացորդային ժամկետները գնահատվել են 2-ից մինչև 19 տարի (2024թ.-ի համար որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ է ճանաչել թվով 9 տարածք մինչև 3 տարի մնացորդային արժեքով): Հաշվետու տարվա վարձակալության գծով պարտավորությունների մեջ ներառվել են նաև նախորդ տարիների պայմանագրերը, որոնց գծով Խումբը նախորդ տարի որոշել էր չճանաչել վարձակալության գծով պարտավորություններ, քանի որ դրանք համարել էր մինչև 12 ամիսների ընթացքում օգտագործվող: Հաշվետու տարվա ընթացքում Խումբը փոխել է իր գնահատումները և համարում է այդ տարածքները 12 ամսից ավելի ժամկետով օգտագործվող: Ստորև ներկայացվում են նաև գնահատման փոփոխության արդյունքում առաջացող տարբերությունների ազդեցությունները հետագա տարիների համար.

	Փոփոխությունից հետո	Նախքան փոփոխությունը	Տարբերություն
	31.12.2025	31.12.2025	31.12.2025
<i>Մեկ տարվա ընթացքում</i>			
Վարձավճարներ	862,301	372,390	489,910
Ֆինանսական ծախս	(230,355)	(60,556)	(169,799)
	631,946	311,834	320,111
<i>Երկրորդից հինգ տարիների ընթացքում</i>			
Վարձավճարներ	1,751,072	372,390	1,378,681
Ֆինանսական ծախս	(263,284)	(20,710)	(242,574)
	1,487,787	351,680	1,136,107
<i>Հինգ տարվանից հետո</i>			
Վարձավճարներ	29,886	-	29,886
Ֆինանսական ծախս	(13,710)	-	(13,710)
	16,176	-	16,176
Զուտ ներկա արժեք	2,135,909	663,514	1,472,395

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

8. Գուղվիլ

Մայր ընկերություն 2025թ.-ի հունիսի 03-ին ձեռք է բերել Դուստր ընկերության 100% բաժնեմասը:

Դուստր ընկերության ձեռքբերման օրվա դրությամբ տեղի են ունեցել գուտ ակտիվների իրական արժեքների ճշգրտումներ:

	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Ճշգրտում
Շենք, շինություն	17,500	358,291	340,791
	17,500	358,291	340,791

Շենքը գտնվում է ք.Երևան, Արին Բերդի փ. 3 նրբ., 13 հասցեում, որի իրական արժեքը հանդիսացել է «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեքը, քանի որ ձեռքբերման պահին շենքը չի գնահատվել անկախ գնահատողի կողմից:

Չուտ ակտիվների իրական արժեքի փոփոխություն տեղի չի ունեցել ձեռքբերման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթվի վերջը ընկած ժամանակահատվածում:

Դուստր ընկերության գուտ ակտիվները ձեռքբերման օրվա դրությամբ ներկայացված են ստորև.

	03.06.2025թ.-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	17,500
Կուտակված վնաս	(422)
Իրական արժեքի ճշգրտումներ	340,791
Ընդամենը գուտ ակտիվներ	357,869

Դուստր ընկերության կուտակված վնասը 01.01.2025-ի դրությամբ կազմել է 422 հազար դրամ, 2025 թվականի գուտ շահույթը կազմել է 1,313 հազար դրամ: Դուստր ընկերության գուտ շահույթը գեներացվել է ձեռքբերումից հետո:

Մայր ընկերության կողմից տրված հատուցման արժեքը գերազանցել է Դուստր ընկերության գուտ ակտիվները ձեռքբերման օրվա դրությամբ, ուստի տարբերությունը ճանաչվել է Գուղվիլ: Գուղվիլի հաշվարկը ներկայացված է ստորև.

	03.06.2025թ.-ի դրությամբ
Ներդրման արժեք	541,100
Դուստրի գուտ ակտիվների իրական արժեք	(357,869)
Գուղվիլ	183,231

Դուստր ընկերության ձեռքբերման օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը գուղվիլի արժեզրկում տեղի չի ունեցել:

9. Պաշարներ

Հազ. դրամ	31.12.2025	31.12.2024
Ապրանքներ	5,573,795	5,470,710
Հումք և նյութեր	138,255	109,235
Արտադրանք	120,417	82,387
	5,832,467	5,662,332

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Շարունակվող գործունեության գծով 2025 թվականի ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների ինքնարժեքը կազմում է 14,877,806 հազար դրամ (2024 թվականի ընթացքում՝ 13,499,569 հազար դրամ): Ակնկալվում է, որ ներկայացված պաշարները ամբողջությամբ կփոխհատուցվեն տասներկու ամսվա ընթացքում: 2025 և 2024թթ.-ների ընթացքում գրավադրված պաշարներ չեն եղել:

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

<i>Հազ. դրամ</i>	31.12.2025	31.12.2024
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	989,545	952,995
Այլ դեբիտորական պարտքեր	9,826	2,059
	999,371	955,054
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	1,338,013	1,033,023
Դեբիտորական պարտքեր բյուջեյից	38,238	18,560
	1,376,251	1,051,583
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,375,622	2,006,637

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Տե՛ս ծանոթագրություն 26 առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>Հազ. դրամ</i>	31.12.2025	31.12.2024
Ազգային արժույթի դրամարկղ	374,972	369,415
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	1,746,166	2,188,422
Բանկային հաշիվներ Արտարժույթով	993,858	1,054,103
Դրամական միջոցներ ճանապարհին	144,095	282,091
	3,259,091	3,894,031

Տ՛ես ծանոթագրություն 26՝ դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դրամական միջոցներից 58,077 հազար դրամը գրավադրված է ՀՀ բանկերում (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 58,077 հազար դրամը):

12. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3,600,000 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 72,000 հազար դրամ անվանական արժեքով 50 բաժնեմասից: (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,600,000 հազար ՀՀ դրամ): Ընկերության բաժնեմասերը ամբողջությամբ տեղաբաշխված են և լրիվ վճարված: Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

Զբաղիված շահույթ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ընկերությունն իրավունք ունի ոչ հաճախ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնելու իր շահույթի բաշխում բաժնետերերի միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից: Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է ընկերության բաժնետերերի միջև՝ ըստ ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնետոմսերի չափերի: Ընկերության մասնակիցներն են՝

Հազ. դրամ	Բաժնեմասի		Բաժնեմասի	
	չափը	չափը %	չափը	չափը %
	2025թ.		2024թ.	
Ժիրայր Բարսեղյան	360,000	10	360,000	10
Հակոբ Մենեմշյան	1,080,000	30	1,080,000	30
Գեղամ Բարսեղյան	1,080,000	30	1,080,000	30
Արմեն Բարսեղյան	360,000	10	360,000	10
Լևոն Բարսեղյան	360,000	10	360,000	10
Վարդան Բարսեղյան	360,000	10	360,000	10
	3,600,000	100	3,600,000	100

13. Վարկեր և փոխառություններ

Հազ. դրամ	Ընթացիկ	
	31.12.2025	31.12.2024
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Բանկային վարկեր	32,532	99,378
	32,532	99,378
Ոչ Ընթացիկ		
<i>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Բանկային վարկեր	17,651	42,825
	17,651	42,825

Բանկային վարկերն ունեն 1-4 տարի մարման ժամկետ և տարեկան 7.95-16% միջին տոկոսադրույք (2024թ.՝ 1-3 տարի մարման ժամկետ և տարեկան 7.95-11.85% տոկոսադրույք): Վարկերի և իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ գեղչման ազդեցությունն էական չէ: Վարկերի և փոխառությունների արժույթների բացահայտումը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում: Տարվա ընթացքում վարկերի մայր գումարների և տոկոսագումարների վճարման ժամկետների խախտում չի եղել: Ընկերության վարկային պարտքը գոյանում է ՀՀ-ում գործող թվով երեք բանկից: Ընկերության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 26-ում:

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. դրամ	31.12.2025	31.12.2024
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Շահաբաժնի գծով պարտավորություն	6,693,169	6,411,577
Առևտրային կրեդիտորական պարտքեր	439,367	371,896
Չօգտագործված արձակուրդայինների գծով	241,827	234,362
Վճարվելիք աշխատավարձ	77,052	57,924
Այլ կրեդիտորական պարտքեր	34	33
	7,451,449	7,075,792

Ոչ ֆինանսական պարտավորություններ

Վճարվելիք հարկեր և տուրքեր

451,621

336,899

Ստացված կանխավճարներ

282,326

152,072

733,947

488,971

8,185,396

7,564,763

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 9 օր (2024թ.՝ 8 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 26-ում:

15. Հասույթ

Հազ. դրամ

2025թ.

2024թ.

Ապրանքների վաճառքներից հասույթ

23,299,196

22,006,483

Արտադրանքի վաճառքներից հասույթ

752,336

680,909

Ապրանքների իրացման և տեղադրման ծառայություն

435,747

280,882

24,487,279

22,968,274

Խմբի հասույթի հիմնական մասը ճանաչվել է ժամանակի մեջ ինչ-որ պահին փոխանցվող ապրանքների գծով:

16. Վաճառքի ինքնարժեք

Հազ. դրամ

2025թ.

2024թ.

Վաճառված ապրանքների ինքնարժեք

14,053,014

13,201,629

Վաճառված արտադրանքի ինքնարժեք

346,747

297,940

Ծառայությունների մատուցման ինքնարժեք

291,497

-

14,691,258

13,499,570

17. Այլ եկամուտներ

Հազ. դրամ

2025թ.

2024թ.

Կրեդիտորական պարտքի ներում

61,182

-

Հիմնական միջոցների վաճառքից զուտ օգուտ

4,777

11,366

Անհատույց սզուացված ակտիվներ

1,447

3,085

Այլ

11,302

113,711

78,708

128,162

18. Իրացման ծախսեր

Հազ. դրամ

2025թ.

2024թ.

Հատուցում աշխատակիցներին

3,979,944

3,835,811

Մաշվածություն

851,669

357,272

Մարկետինգի և գովազդի ծախսեր

673,391

676,334

Տրանսպորտային ծախսեր

189,943

180,664

Վարձակալության ծախսեր

1,131

451,067

Իրացման այլ ծախսեր

242,012

244,983

5,938,090

5,746,131

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

19. Վարչական ծախսեր

<i>Հազ. դրամ</i>	2025թ.	2024թ.
Հատուցում աշխատակիցներին	495,804	392,100
Մաշվածություն	183,618	172,696
Բանկային և գրասենյակային ծախսեր	156,271	198,358
Արտարժույթի փոխարկումից վնաս	119,708	78,805
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	56,532	106,490
Ապրանքի դուրս գրում ներքին օգտագործման համար	32,132	12,829
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	13,657	14,428
Խորհրդատվական ծախսեր	2,810	2,935
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	2,876	2,350
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	2,965	2,312
Վարչական այլ ծախսեր	59,154	37,568
	1,125,527	1,020,871

20. Այլ ծախսեր

<i>Հազ. դրամ</i>	2025թ.	2024թ.
Նյութական արժեքների կորուստներ	172,149	190,043
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	22,439	3,657
Տույժեր և տուգանքներ	3,849	112
Այլ ծախսեր	11,708	-
	210,145	193,812

21. Զուտ ֆինանսական եկամուտ(ծախս)

<i>Հազ. դրամ</i>	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտներ	60,350	57,824
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	60,350	57,824
Բանկային վարկերի գծով տոկոսային ծախսեր	(3,325)	(19,361)
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	(297,686)	(127,583)
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	(301,011)	(146,944)
	(240,661)	(89,120)

22. Շահութահարկ

<i>Հազ. դրամ</i>	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	435,616	458,065
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	(19,013)	(6,076)
	416,603	451,989

Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	- 2025 -		- 2024 -	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/վնաս մինչև շահութահարկով հարկումը	2,366,725	100%	2,491,718	100%
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	426,011	18%	448,509	18%
Զնվազեցվող / (չհարկվող) հոդվածներ	(52,264)	2.2%	19,332	0.8%
Հարկվող շահույթ/վնաս	2,314,461		2,511,050	
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	416,603	17.6%	451,989	18.1%

- Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվել են ժամանակավոր տարբերությունների այն չափով, որքանով Հնկերության ղեկավարությունը ակնկալում է, որ դրանք փոխհատուցելի են:

2025թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորվում են հետևյալ կերպ.

<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>	01.01.2025	Շահույթում կամ վնասում ճանաչված	31.12.2025
Վարձակալության գծով պարտավորություն	169,203	215,260	384,464
Զօգտագործված արձակուրդային օրեր	42,185	1,344	43,529
	211,388	216,604	427,992
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(153,450)	(197,591)	(351,041)
	(153,450)	(197,591)	(351,041)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	57,938	19,013	76,951

2024թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորվում են հետևյալ կերպ.

<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>	01.01.2024	Շահույթում կամ վնասում ճանաչված	31.12.2024
Վարձակալության գծով պարտավորություն	37,698	51,150	169,203
Զօգտագործված արձակուրդային օրեր	43,194	(1,009)	42,185
	80,892	50,141	211,388
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(29,030)	(44,065)	(153,450)
	(29,030)	(44,065)	(153,450)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	51,862	6,076	57,938

23. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1. Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հնկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների գույտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի հավաստի տվյալները: Հնկերության պաշարների հետագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ միջազգային շուկայում և աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները, որը կարող է նվազեցնել ապագա վաճառքի գները:

Իրական արժեքի չափումը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Այն պարագայում, երբ գործող շուկաների տվյալները բացակայում են, ֆինանսական գործիքների իրական արժեքը և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու համար ղեկավարությունը օգտագործում է գնահատման մեթոդներ: Այս գործընթացը ընդգրկում է գնահատումների և ենթադրությունների մշակում, որոնք համահունչ են նրա հետ, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեն գործիքը: Ղեկավարությունը իր ենթադրությունների համար որպես հիմք է վերցնում դիտարկելի տեղեկատվությունը, սակայն այդպիսի տեղեկատվությունը միշտ չէ, որ հասանելի է: Այս պարագայում ղեկավարությունը օգտագործում է հասանելի լավագույն տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել հաշվետու ամսաթվի դրությամբ իրական գներից, որոնք կարող են ստացվել պարզած ձեռքի գործարքի պարագայում (տե՛ս Ծանոթագրություն 24):

Վարձակալություն

Կատարվել է վարձակալության գծով պարտավորությունների ճանաչման ժամանակ վարձակալության ժամկետների փոփոխություն: Գնահատման փոփոխությունները և դրանց ազդեցությունը հետագա տարիների վրա ներկայացված են Ծանոթագրություն 7.2-ում:

24. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության մասնակիցները, հիմնական ղեկավար անձնակազմը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ձեռնարկությունները և այլն: Ընկերությունը չունի վերջնական վերահսկող:

24.1. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

<i>Հազ. դրամ</i>	2025թ.	2024թ.
Գործարքներ		
Ապրանքների վաճառք	249,724	152,952
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	339,142	367,877
Փոխառությունների գուտ մարում	-	(255,018)
<i>Հազ. դրամ</i>		
Մնացորդներ	31.12.2025	31.12.2024
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	56,965	9,110
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23,963	13,639
Ստացված կանխավճար	5,342	-

24.2. Գործարքներ ղեկավարության հետ

<i>Հազ. դրամ</i>	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և այլ հատուցումներ ներառյալ հարկերը	38,856	39,016
	38,856	39,016

25. Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես եկամտի և ծախսի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.10-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

	31.12.2025	31.12.2024
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
-Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	999,371	955,054
-Դրամական միջոցներ	3,259,091	3,894,031
Ընդամենը	4,258,462	4,849,085
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>		
-Վարկեր և փոխառություններ	50,183	142,203
-Վարձակալության գծով պարտավորություններ	2,135,909	940,019
-Կրեդիտորական պարտքեր	7,451,449	7,075,792
Ընդամենը	9,637,541	8,158,014

Յուրաքանչյուր ֆինանսական գործիք մանրամասն ներկայացված է համապատասխան ծանոթագրությունում: Ֆինանսական գործիքների ռիսկային վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 26-ում: Գործիքների իրական արժեքի չափումները ներկայացված են Ծանոթագրություն 27:

26. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը, շուկայական ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Խումբը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ կապակցված կողմերին տրված փոխառությունները, բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Խմբի պարտքային ռիսկն առաջանում է Ծանոթագրություն 25-ում ներկայացված ֆինանսական ակտիվներից: Այն կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը գնահատվել է զրո: Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո է:

բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը

գ) Արտարժույթային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով՝ հիմնականում ԱՄՆ դոլարով, Եվրոյով և Ռուբլով արտահայտված գումարների հետ:

	31.12.2025			31.12.2024		
	USD	EUR	RUB	USD	EUR	RUB
<i>Ֆինանսական ակտիվներ</i>						
-Առևտրային դեբիտորական պարտքեր	35,864	2,341.00	-	59,622	3,604	-
-Դրամական միջոցներ	863,717	129,652	489	823,103	230,273	727
Ընդամենը	899,581	131,993	489	882,725	233,877	727
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>						
-Կրեդիտորական պարտքեր	139,256	41,608	16,261	78,884	30,472	-
Ընդամենը	139,256	41,608	16,261	78,884	30,472	-
Զուտ արդյունք	760,325	90,385	(15,772)	803,841	203,405	727

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ արտարժույթների նկատմամբ դրամի աճին/նվազմանը: Նշված տոկոսադրույքները ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխություններն են:

Դրամի արժևորումը համապատասխան արժույթի նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը Խմբի շահույթի կամ վնասի վրա.

<i>Հազար դրամ</i>	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Տեղացի ազդեցություն	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շահույթ կամ վնաս	(76,033)	(80,384)	(9,039)	(20,341)	(1,577)	(73)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Ընկերությունը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ հիմք ընդունելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսական պահանջները: Որպես կանոն, այս պահանջները կանխատեսվում են

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

տարեկան և ամսական կտրվածքով: Խումբը ձգտում է ապահովել դրամական միջոցների և դրանց համարժեքների այնպիսի չափ, որը կգերազանցի ֆինանսական պարտավորություններից (բացառությամբ առևտրական կրեդիտորական պարտքերի) ակնկալվող դրամական միջոցների արտահոսքը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը՝ ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները:

2025թ.	Մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 1 տարի	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,451,449	-	-	-	7,451,449
Վարձակալության պարտավորություններ	315,973	315,973	1,487,787	16,176	2,135,909
Վարկեր և փոխառություններ	16,695	15,837	17,651	-	50,183
	7,784,117	331,810	1,505,438	16,176.00	9,637,541
2024թ.	Մինչև 6 ամիս	6 ամսից մինչև 1 տարի	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,075,792	-	-	-	7,075,792
Վարձակալության պարտավորություններ	138,252	138,252	663,515	-	940,019
Վարկեր և փոխառություններ	49,689	49,689	42,825	-	142,203
	1,096,806	49,689	42,825	-	8,158,014

Ստորև ներկայացված է Ընկերության ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը:

	31.12.2025	31.12.2024
Ընթացիկ ակտիվներ	11,467,180	11,562,999
Ընթացիկ պարտավորություններ	8,927,396	8,038,219
Ընթացիկ իրացվելիության գործակից	1.3	1.4
Արագ իրացվելի ակտիվներ*	5,634,713	5,900,667
Ընթացիկ պարտավորություններ	8,927,396	8,038,219
Արագ իրացվելիության գործակից	0.6	0.7
Դրամական միջոցներ և համարժեքներ	3,259,091	3,894,031
Ընթացիկ պարտավորություններ	8,927,396	8,038,219
Բացարձակ իրացվելիության գործակից	0.4	0.5

27. Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ)

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, տրամադրված փոխառությունները, ժամկետային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Խմբի ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակով:

28. Կապիտալի ռիսկի կառավարում

Խումբը իր կապիտալը կառավարում է այնպես, որ ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի: Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք: Հաշվի են առնվում Խմբի վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ղեկավարության գնահատմամբ՝ Ընկերությունն ունի բավարար ռեսուրսներ իր գործունեության շարունակականությունն ապահովելու և պարտավորությունները սահմանված ժամկետներում կատարելու համար:

	31.12.2025	31.12.2024
<i>Զուտ պարտք</i>		
Վարկեր և փոխառություններ	50,183	142,203
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(3,259,091)	(3,894,031)
	(3,208,908)	(3,751,828)
<i>Սեփական կապիտալ</i>		
Ընդհանուր սեփական կապիտալ	5,286,062	5,403,406
	5,286,062	5,403,406
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	(0.61)	(0.69)

29. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Խմբի գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Խմբի չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Բարսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ: Թեև խմբի ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել: